Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՌՈՅԱԼ ՍԻԳՆԱՉՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ՄԵԼԻՔՅԱՆՍ ԸՆԴ ՔՈ
ՀՀ, ք.Երևան 0014
Ազատության 24/19
Հեռ. + 374 95 90 19 49

MELIKYANS & CO
24/19 Azatutyan Str.
0014 Yerevan, Armenia
Tel. + 374 95 90 19 49

www.mco.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ռոյալ Սիգնաչր» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության Բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռոյալ Սիգնաչր» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (այսուհետ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը եւ հաշվետվություններին կից ծանոթագրությունները 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարիների համար:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Ընկերությունում ներդրված ներքին վերահսկողության համակարգը հնարավորություն չի ընձեռնում ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ կենդանի խաղերի գործունեությունից ներկայացված հասույթի ամբողջականության վերաբերյալ: Մենք ի վիճակի չեղանք այլ աուդիտորական ընթացակարգերի միջոցով ձեռք բերելու բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ կենդանի խաղերի գործունեությունից ներկայացված հասույթի ամբողջականության վերաբերյալ:

2. Մենք չենք մասնակցել դրամարկղում Ընկերության դրամական միջոցների տարեվերջի գույքագրմանը, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, Ծանոթագրություն 9-ում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամարկղում դրամական միջոցների առկայության վերաբերյալ: Նշվածի արդյունքում, մենք անկարող էինք որոշել, արդյո՞ք որևէ ճշգրտում անհրաժեշտ էր հաշվառված կամ չհաշվառված դրամական միջոցների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) եւ էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի

են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, եւ կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար եւ համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան

Տնօրեն-բաժնետեր

Առաջադրանքի պատասխանատու

26 ապրիլ 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4	54,460	63,798
Հետաձգված հարկային ակտիվներ	5	3,581	12,115
		58,041	75,913
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	85,675	93,190
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	67,755	73,759
Տրված փոխառություններ	8	401,606	561,193
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	328,011	30,475
		883,047	758,617
Ընդամենը ակտիվներ		941,088	834,530
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	10	10,150	10,150
Կուտակված շահույթ		162,054	53,244
Կապիտալի այլ տարրեր		(306,316)	(179,539)
		(134,112)	(116,145)
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	116,428	28,232
		116,428	28,232
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	955,765	912,480
Կրդեիտորական պարտքեր շահութահարկի գծով	19	3,007	9,963
		958,772	922,443
		1,075,200	950,675
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		941,088	834,530

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 26 ապրիլ 2024թ.-ին

Տնօրեն՝ Հակոբ Գևորգյան

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ Տիգրան Զոհարբյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ.	2022թ.
Հասույթ խաղատան գործունեության գծով	13	9,276,003	18,277,675
Վնաս խաղատան գործունեության գծով	13	(8,101,975)	(16,039,823)
Զուտ հասույթ խաղատան գործունեության գծով		1,174,028	2,237,852
Հասույթ բարի գործունեության գծով		6,673	14,148
Ընդամենը հասույթ		1,180,701	2,252,000
Այլ եկամուտ			
Եկամուտներ գործառնական վարձակալությունից		12,100	12,100
Այլ եկամուտ	14	76,019	5,138
Ընդամենը եկամուտներ		88,119	17,238
Ծախսեր			
Անձնակազմի վարձատրություն		(259,105)	(963,897)
Մաշվածություն և ամորտիզացիա		(194,271)	(197,143)
Խաղարկման գծով ծախսեր		(208,707)	(361,199)
Խաղատան գծով նյութածախս		-	(51,043)
Բարի գծով նյութածախս		(4,954)	(10,346)
Վարձակալության գծով ծախսեր	15	(281,256)	(354,683)
Մասնագիտական և խորհրդատվական ծախսեր		(16,467)	(17,567)
Տրանսպորտային ծախսեր		(32,135)	(63,703)
Տեխնիկական և այլ սպասարկման ծախսեր		(15,487)	(12,800)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(34,021)	(35,555)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		(2,034)	(2,214)
Հյուրանոցային ծառայությունների գծով ծախսեր		(11,039)	(11,165)
Մարկետինգի և գովազդի ծախսեր		(1,725)	(10,258)
Տնտեսական ծախսեր		(7,476)	(6,770)
Աշխատակիցների համար սննդի գծով ծախսեր		(23,046)	(4,690)
Բանկային և ապահովագրական ծախսեր		(5,314)	(8,586)
Չփոխհատուցվող հարկեր		(62,535)	(84,143)
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրում		(1,440)	-
Գործառնական այլ ծախսեր	16	(23,340)	(58,472)
Ընդամենը ծախսեր		(1,184,352)	(2,254,234)
Ֆինանսական եկամուտ	17	40,304	41,334
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	18	1,456	(8,767)
Շահույթ մինչև հարկերը		126,228	47,571
Շահութահարկի գծով ծախս	19	(17,418)	(7,342)
Տարվա շահույթ		108,810	40,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		108,810	40,229

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կապիտալի այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,150	(120,625)	19,195	(91,280)
Տարվա շահույթ	-	-	40,229	40,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	40,229	40,229
Նախորդ տարիների արդյունքի ճշգրտում	-	-	(6,180)	(6,180)
Փոփոխություններ կապիտալի այլ տարրերում	-	(58,914)	-	(58,914)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,150	(179,539)	53,244	(116,145)
Տարվա շահույթ	-	-	108,810	108,810
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	108,810	108,810
Փոփոխություններ կապիտալի այլ տարրերում	-	(126,777)	-	(126,777)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,150	(306,316)	162,054	(134,112)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա շահույթ		108,810	40,229
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն և ամորտիզացիա		194,271	197,143
Շահութահարկի գծով ծախս		17,418	7,342
Ֆինանսական եկամուտ		(40,304)	(41,334)
Փոխարժեքային տարբերությունից վնաս / (օգուտ)		(1,456)	8,767
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		278,739	212,147
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		5,882	697
Պաշարների փոփոխություն		7,515	(52,798)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		43,135	(72,478)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		335,271	87,568
Վճարված տոկոսներ		(34,336)	(5,742)
Վճարված շահութահարկ		(15,840)	(6,104)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		285,095	75,722
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(184,933)	(200,231)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		-	666
Տրամադրված փոխառություններ		74,582	191,736
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(110,351)	(7,829)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարկերի և փոխառությունների մարում		122,532	(70,673)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		122,532	(70,673)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)		297,276	(2,780)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		260	(50)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		30,475	33,305
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	9	328,011	30,475

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 10-ից 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Ընկերության գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ռոյալ Սիգնաչր» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2019թ. մայիսի 17-ին: Ընկերության գրանցման համարն է 264.110.1074503:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, այլ օրենսդրական և նորմատիվ ակտերին և հաստատված կանոնադրության պահանջներին համապատասխան:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է և տնօրենը: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որն ընտրվում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

2023թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 270 մարդ (2022թ.՝ 193 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Ռ. Միքայելյան փողոց 2 3:

Ընկերության գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի 2, 4/1 հյուրանոցային համալիր (թիվ 2 մասնաշենք):

Գործարար միջավայր

Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա՝ հանգեցնելով հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ

տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարի (ՓՄԿ–ների ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավոր:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	2023թ.	2022թ.
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06
Ռուբլի	4.50	5.59
ՄԱԷ դիրհամ	110.22	107.16

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:
Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն զուտ ակտիվներում:

Ընկերության ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.2 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	1-3 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	1-8 տարի

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.3 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ՝

- Ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ մարվում են, կամ
- Ընկերությունը այլ կողմին է փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ
- Ընկերությունը, չնայած պահպանում է սեփականության հետ կապված որոշ նշանակալի ռիսկեր ու հատույցներ, ակտիվի նկատմամբ վերահսկողությունը փոխանցել է մեկ այլ կողմի և այդ այլ կողմը գործնականում հնարավորություն ունի ակտիվն ամբողջությամբ վաճառելու չկապակցված երրորդ կողմին և կարող է այդ հնարավորությունն իրագործել միակողմանիորեն՝ կարիք չունենալով փոխանցման վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական գործիքների դասակարգումը

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Ընկերությունը այն չափում է գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափման, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով), բացառությամբ եթե համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ կամ գործարքի կողմ հանդիսացող կազմակերպություններից մեկի մոտ առաջացնում է ֆինանսական պարտավորություն, կամ կոնտրագենտի մոտ՝ ֆինանսական ակտիվ:

Ընկերությունը հետևյալ ֆինանսական գործիքները՝ որպես հիմնական ֆինանսական գործիքներ, հաշվառում է համաձայն ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների 11-րդ բաժնի՝

- դրամական միջոց,
- պարտքային գործիք,փոխառություն ստանալու պարտավորվածություն,
- ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերում և առանց հետ վաճառքի իրավունքի սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերում ներդրում:

Ֆինանսական գործիքների հետագա չափումը

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական

պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ընկերությունը գնահատում է առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվում են՝ ելնելով ժամկետանց օրերից

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են և տոկոսակիր չեն: Արտարժույթով արտահայտված առևտրային կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ընկերությունը իրականացնում է միայն հիմնական ֆինանսական գործիքների հետ կապված գործարքներ: Այնուամենայնիվ, եթե տեղի ունենա այլ ֆինանսական գործիքի հետ կապված գործարք, Ընկերությունը կկիրառի ՓՄԿների ՖՀՄՍ-ների 12-րդ բաժինը:

3.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.6 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.7 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Ընկերությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Ֆինանսական

վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտականություն: Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվո ակտիվները: Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են Եկամտի և ծախսերի մասին հաշվետվությունում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Հասույթ

Հասույթը ստացվում է հիմնականում խաղատնային գործունեությունից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	7,189	400	446,411	66,133	520,133
Ավելացում	256	-	183,865	16,110	200,231
Օտարում	(3,773)	-	(629,669)	(3,586)	(637,028)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,672	400	607	78,657	83,336
Ավելացում	1,008	-	182,830	1,095	184,933
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,680	400	183,437	79,752	268,269
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,928	12	445,259	10,558	458,757
Տարվա հաշվարկ	2,265	40	184,549	10,289	197,143
Օտարման հետևանքով դուրսգրում	(3,773)	-	(629,669)	(2,920)	(636,362)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,420	52	139	17,927	19,538
Տարվա հաշվարկ	1,409	40	182,891	9,931	194,271
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,829	92	183,030	27,858	213,809
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,252	348	468	60,730	63,798
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,851	308	407	51,894	54,460

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 208 հազար դրամ (2022թ. զրո դրամ):

5 Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տարեսկզբի մնացորդ	12,115	12,873
Շահույթում կամ վնասում ճանաչված	(8,534)	(758)
Տարեվերջի մնացորդ	3,581	12,115

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	12,115	(8,534)	3,581
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	12,115	(8,534)	3,581
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	12,115	(8,534)	3,581

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	12,873	(758)	12,115
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	12,873	(758)	12,115
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	12,873	(758)	12,115

6 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	80,183	90,683
Ապրանքներ	5,492	2,507
	85,675	93,190

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,262	2,461

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ դեբիտորական պարտքեր	41	3,832
	1,303	6,293
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	19,427	20,826
Դեբիտորական պարտքեր բյուջեյից	47,025	46,640
	66,452	67,466
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	67,755	73,759

8 Տրված փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրված փոխառություններ	401,606	561,193
	401,606	561,193

9 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	325,612	30,272
Բանկային հաշիվներ	2,399	203
	328,011	30,475

10 Կապիտալ և պահուստներ

10.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,150 հազար ՀՀ դրամ: Այն բաժանված է մեկ բաժնեմասի, որի անվանական արժեքն է 10,150 հազար ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը ամբողջությամբ տեղաբաշխված է, լրիվ վճարված և պատկանում է Արմեն Հրաչիկի Ունանյանին (100% բաժնեմաս): Ընկերության սեփական կապիտալը բաղկացած է նաև կապիտալի այլ տարրերից, որոնք առաջացել են հիմնադրի կողմից ստացված և տրված փոխառությունների ՓՄԿ ՖՀՄՍ-ների համաձայն զեղչման արդյունքում: Կապիտալի այլ տարրերը ներկայացված են ստորև՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	(179,539)	(120,625)
Տրված փոխառությունների զեղչումից	(126,777)	(58,914)
Տարեվերջի մնացորդ	(306,316)	(179,539)

11 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ոչ ընթացիկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	116,428	28,232
	116,428	28,232

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	264,102	126,579
Կրեդիտորական պարտք աշխատակիցներին	6,428	28,709
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	19,896	67,307
Կրեդիտորական պարտք շահաբաժինների գծով	655,133	668,396
Այլ կրեդիտորական պարտքեր	823	859
	946,382	891,850
Ոչ ֆինանսական պարտավորություններ		
Վճարվելիք հարկեր և տուրքեր	9,383	20,630
	9,383	20,630
	955,765	912,480

13 Հասույթ խաղատան գործունեության գծով

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հասույթ խաղատան գործունեության գծով	9,276,003	18,277,675
Վնաս խաղատան գործունեության գծով	(8,101,975)	(16,039,823)
	1,174,028	2,237,852

Հասույթը բաշխված է հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կենդանի խաղերի գծով	217,751	708,592
Մեքենայացված խաղերի գծով	956,277	1,529,260
	1,174,028	2,237,852

14 Այլ եկամուտ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Արձակուրդի պահուստի հակադարձում	47,411	4,210
Անհուսալի կրեդիտորական պարտքի դուրսգրում	27,688	-
Փոխհատուցման վճարից եկամուտ	3	246
Այլ	917	682

Հազար դրամ	2023թ.	2022թ.
	76,019	5,138

15 Վարձակալության գծով ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Խաղային ապարատների վարձակալություն	150,894	255,313
Անշարժ գույքի վարձակալություն	89,700	89,700
Այլ	40,662	9,670
	281,256	354,683

16 Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Պլաստիկ քարտերի և սեղանի ծածկերի ձեռքբերման հետ կապված ծախսեր	6,115	7,705
Նվիրատվություններ	5,000	5,000
Մարդկային ռեսուրսների հավաքագրման ծառայութնուն	2,245	-
Տույժ-տուգանքների գծով ծախսեր	2,054	94
Արտարժույթի փոխարկման ծախսեր	1,658	633
Ախտահանման ծախսեր	480	480
Կորուստների գծով ծախսեր	-	15,045
Այլ	5,788	29,515
	23,340	58,472

17 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տոկոսային եկամուտ փոխառությունների զեղչումից	42,495	60,079
Հաշվեգրված տոկոսներ փոխառությունների գծով	(2,191)	(11,156)
Տոկոսային ծախս փոխառությունների զեղչումից	-	(7,589)
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	40,304	41,334

18 Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	260	(50)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(122)	(6)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(150)	206
Վարկեր և փոխառություններ	1,468	(8,917)
	1,456	(8,767)

19 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	8,884	6,584

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման գծով	8,534	758
Ընդամենը փոխհատուցում շահութահարկի գծով	17,418	7,342

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	%
Շահույթ նախքան շահութահարկի գծով հարկումը	126,228		47,571	
Շահութահարկ՝ հարկի կիրառելի դրույքաչափով	22,721	18%	8,563	18%
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	(5,303)	-4%	(1,221)	-3%
	17,418	14%	7,342	15%

20 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

21 Ֆինանսական գործիքներ

21.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

21.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,303	6,293
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	328,011	30,475
Տրված փոխառություններ	401,606	561,193
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	730,920	597,961
Ֆինանսական պարտավորություններ		

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	264,102	126,579
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	116,428	28,232
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	380,530	154,811

22 Պարտավորվածություններ

22.1 Իրավական պարտավորվածություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության օրվա դրությամբ Ընկերության նկատմամբ առկա չեն որևէ դատական հայցեր: Միևնույն ժամանակ Ընկերությունը վերոնշյալ ամսաթվերի դրությամբ չունի որևէ դատական հայց ընդդեմ երրորդ կողմի:

23 Պայմանականություններ

23.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

23.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23.3 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24 Կապակցված կողմեր

Ընկերությունի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը, անդամները:

24.1 Վերահսկողություն

Ընկերութան վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ քաղաքացի Արմեն Ունանյանը:

24.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ

Գործարքներ	2023թ.	2022թ.
Գործարքներ կապակցված ընկերությունների հետ		
Վարձակալություն	(111,651)	(193,923)
Իրավաբանական ծառայությունների մատուցում	(4,712)	(2,480)
Ստացված փոխառություններ	145,781	122,057
Ստացված փոխառությունների մարում	(56,102)	(169,070)
Գործարքներ բաժնետիրոջ հետ		
Տրված փոխառություններ	6,197	18,077
Տրված փոխառությունների մարում	(82,500)	(209,447)
Ստացված փոխառությունների մարում	-	(18,245)
Վճարված շահաբաժին	(13,263)	(11,579)

Հազար դրամ

Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կապակցված ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,643	28,232
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	47,845	17,318
Բաժնետեր		
Տրված փոխառություններ	524,446	599,281
Շահաբաժին	655,133	668,396

24.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	4,981	11,485